ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ИНСТИТУТ ИСТОРИИ

0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
0019, Ереван 19, пр. Маршала Баграмяна 24/4.

Հեռ.(37410) 529 263
Тел. 37410) 529 263
Fax. (37410)560 269
e-mail: history@sci.am

2468-086
20.08.2020

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Վերջին շրջանում հանրապետության տարբեր լրատվամիջոցներ գրավոր և բանավոր կերպով դիմում են ինստիտուտին՝ պարզելու համար, թե որքանով է համապատասխանում իրականությանը 2020 թ. օգոստոսի 9-ին Հանրային հեռուստատեսության կազմակերպած «Պատմության չափորոշիչները. հանրային քննարկում» հաղորդման ժամանակ ՀՀ ԿԳՄՍ լրամշակող փորձագետների թիմի ղեկավար Լիլիթ Մկրտչյանի այն հայտարարությունը, թե 2017 թ. թուրք հեղինակների հետ իրենց հրատարակած ու 2019 թ. վերահրատարակած **"History Education in Schools in Turkey and Armenia. A Critique and Alternatives" («Պատմության ուսուցումը Թուրքիայի և Հայաստանի դպրոցներում. քննադատություն և այլընտրանքներ»)** գրքերը քննարկվել են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Ի պատասխան Լ. Մկրտչյանի հայտարարության՝ հայտնում ենք, որ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական բոլոր ստորաբաժանումները՝ գիտական խորհուրդը, տնօրինությունը, ութ բաժինները և Երիտասարդ գիտաշխատողների խորհուրդը երբևէ իրենց նիստերում չեն քննարկել վերոհիշյալ գրքերը: Բնականաբար նման պաշտոնական առաջարկություն ինստիտուտը չի ստացել և հետևաբար չէր էլ կարող այդպիսի քննարկում կազմակերպել ըստ գոյություն ունեցող ընթացակարգի: Ուստիև Լ. Մկրտչյանի այդ հայտարարությունը բացահայտ կեղծիք է և նպատակ է ունեցել մոլորեցնել հանրությանն ու կոծկել իրենց խմբի ոչ ազգանպաստ գործունեությունը:

Հավելենք նաև, որ այս կեղծիքին պատասխանելու համար ինստիտուտում օգոստոսի 18-ին հրավիրված տնօրինության հեռավար նիստում բոլոր ներկաները (տնօրեն, փոխտնօրեն, գիտքարտուղար, բաժինների վարիչներ, երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահ) իրենց վրդովմունքն են հայտնել Լ. Մկրտչյանի թույլ տված ապատեղեկատվության կապակցությամբ:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ